ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գառնի համայնքի 2022-2026թթ. Զարգացման ծրագրի շուրջ հանրային բաց լսումների և քննարկման վերաբերյալ:

12 օգոստոսի 2022թ. գ.Գառնի

Գառնի համայնքի Ս.Շահումյան 11 հասցեում 2022 թվականի օգոստոսի 12-ին ժամը 16[00]-ին տեղի ունեցավ հանրային բաց լսումներ համայնքի 2022-2026թթ. զարգացման ծրագրի շուրջ:

Նախագծի քննարկմանը մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմը, ՀՈԱԿ-ների աշխատակիցներ, համայնքի բնակիչներ, համայնքի ավագանու անդամներ և ՄԱԶԾ-ը ՀՀ ՏԿԵ նախարարության համագործակցության իրականացվող ծրագրի շրջանակում մասնակցեց նաև Ֆլորա Միրզախանյանը:

Բացման և ողջույնի խոսքով հանդես եկավ Գառնի համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մարտիրոսյանը: Խոսքով հանդես եկավ Հասմիկ Գրիգորյանը, վերջինս ներկայացրեց այն զեկուցողներին, ովքեր պետք է ներկայացնեին Զարգացման ծրագիրը: Համայնքի 2022-2026թթ. Զարգացման ծրագիրը իր մեջ ներառում է 7 ծրագիր՝

- ✓ Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում
- ✓ Ջրամատակարարման իրականացում և ջրագծերի հիմնանորոգում
- ✓ Արտաքին լուսավորության անցկացում և պահպանում
- ✓ Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոնի մասնաշենքի հիմնանորոգում
- ✓ Գողթ բնակավայրում արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոնի նոր մասնաշենքի կառուցում
- ✓ Խաղահրապարակների կառուցում և պահպանում
- ✓ Գառնի բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում

1. Գառնիի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Գարսևան Խաչատրայանը ներկայացրեց համայնքի փողոցների և ճանապարհների նորոգման և հիմնանորոգման ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 298562.0 է:
   Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման արդյունքում կունենանք բարեկարգ փողոցներ: Գառնի համայնքի ճանապարհների վնասվածության պատճառով տրանսպորտային միջոցների երթևեկությունը դառնում է անհարմար: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել փողոցների և ճանապարհների նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ՝ ապահովելով տրանսպորտային միջոցների երթևեկությունը, նվազեցնել տրանսպորտային միջոցների ամորտիզացիոն ծախսերը, բարձրացնել բանկչության տեղաշարժի հարմարավետության մակարդակը, ինչպես նաև համայնքը կլինի ավելի գրավիչ ներդրողների համար և կապահովի բարեկեցիկ միջավայր:
2. Գառնիի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Գարսևան Խաչատրայանը ներկայացրեց համայնքի ջրամատակարարման իրականացում և ջրագծերի հիմնանորոգում ծրագիրը, որի ընդհանուր արժեքը՝ 360205.0 է:

Հարցով հանդես եկավ համայնքի բնակիչ՝ Վազգեն Մարտիրոսյանը:
- Նշելով, որ, այո՛, կատարվում են ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ, սակայն Գառնիի համայնքապետարանի վերահսկողությունը և հետևողականությունը թույլ է:
Հարցով հանդես եկավ համայնքի բնակիչ՝ Անգին Հայրապետյանը:
-Մասնավորապես նշելով, որ խմելու ջուրը անցնում է խմելու համար ոչ պիտանի խողովակներով (ցինկից խողովակ), որոնք վտանգավոր են առողջության համար, հարցին խնդրում ենք տալ լուծում:
Հարցով հանդես եկավ համայնքի բնակիչ՝ Արամայիս Հովհաննիսյանը
- Նշելով, որ մայթեզրային ջրահեռացման համակարգերը սխալ է նախագծված, ավտոմեքենաները անզգուշության դեպքում կարող են վնասվել:
Հարցին պատասխանեց Գառնի համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մարտիրոսյանը:
-Նշելով, այս ծրագրով նախատեսված չէ փակել այդ հատվածները, խնդիրը առկա է, բայց համայնքապետարանը փնտրում է այլընտրանքային տարբերակ խնդրի լուծման համար:

3.Գառնիի համայնքապետարանի առաջատար մասնագետ Վիրապ Կարապետյանը ներկայացրեց արտաքին լուսավորության անցկացման և պահպանման ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 159900.0 է:

Փողոցային լուսավորությունն առկա է համայնքի զգալի մասում, կենտրոնական փողոցները լուսավորված են էներգախնայող լուսատուներով: Արտաքին լուսավորության անցկացման նպատակն է բարձրացնել ներհամայնքային երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով դրանք լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար:

4.Գառնիի համայնքապետարանի առաջատար մասնագետ Վիրապ Կարապետյանը ներկայացրեց խաղահրապարակների կառուցման և պահպանման ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 72000.0 է.

Հարցով հանդես եկավ համայնքի բնակիչ՝ Նազար Մուրադյանը:
- Հարցնելով, թե որտեղ են կառուցվելու խաղահրապարակները:
Հարցին պատասխանեց Գառնի համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Գաբրիելյանը:
-Ներկայացնելով խաղահրապարակների կառուցման վայրը:

5.Գողթ բնակավայրի վարչական ղեկավար Էմին Ղարիբյանը ներկայացրեց Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոնի մասնաշենքի հիմնանորոգման ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 65000.0 է:

Արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոնի մասնաշենքի կապիտալ հիմնանորոգման արդյունքում կունենանք հարմարավետ պայմաններով ժամանակակից շենք: Կստեղծվեն բավարար պայմաններ մշակութային միջոցառումների անցկացման համար, կակտիվանա մշակութային կյանքը, համայնքի երեխաները և երիտասարդները կհաղորդակցվեն մշակութային ժառանգության հետ և կստանան հոգևոր դաստիարակություն:

6. Գողթ բնակավայրի վարչական ղեկավար Էմին Ղարիբյանը ներկայացրեց Գողթ բնակավայրում արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոնի նոր մասնաշենքի կառուցման ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 140000.0 է:
7. <<Գառնիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն Մարինե Բաբայանը ներկայացրեց Գառնի բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 36000.0 է:
-Նշելով, որ բնակչության թվով պայմանավորված երեխաների թիվը շատ է, նոր մասնաշենքի կառուցումը հնարավորություն կտա մեծ թվով երեխաների հաճախել նախադպրոցական հաստատություն:

Նախագծում փոփոխություններ կամ լրացումներ առաջարկություններ չկայացվեցին, ընդհանուր քննարկման արդյունքում Գառնի համայնքի 2022-2026թթ. Զարգացման ծրագիրը համարվեց իրատեսական և ընդունելի: Բաց լսումներն ավարտվեցին ժամը 17[15]-ին :

Գառնի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

N	Անուն, Ազգանուն	հասցե՝	հեռախոսահամար՝	ստորագրություն՝
1	[illegible]	Գառնի [illegible] 1 շրջ. 4փ. տ2	077601057	[illegible]
2	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
3	[illegible]	գ. Գոյր 4փ 1տ	041030890	[illegible]
4	[illegible]	գ. [illegible] 18	094187236	[illegible]
5	[illegible]	գ. Գառնի [illegible] գ3	098898288	[illegible]
6	[illegible]	գ. Գոյր [illegible] 10	093800055	[illegible]
7	[illegible]	գ. Գառնի [illegible] 5	043336416	[illegible]
8	[illegible]	գ. Գառնի [illegible]	096313336	[illegible]
9	[illegible]	գ. Գառնի [illegible]	091813224	[illegible]
10	[illegible]	գ. Գառնի [illegible] 8փ. տ. 17/1	096557477	[illegible]
11	[illegible]	գ. Գառնի [illegible] 8	099738243	[illegible]
12	[illegible]	1 փ 1 [illegible] 14 տ	099905340	[illegible]
13	[illegible]	[illegible] փ 24/ա 1 [illegible]	093191767	[illegible]
14	[illegible]	[illegible] փ. 20	099410186	[illegible]

15	[illegible]	[illegible] 6	099706864	[illegible]
16	[illegible]	[illegible] 7	043600320	[illegible]
17	[illegible]	[illegible] 32	091 659977	[illegible]
18	[illegible]	[illegible] 6	043095362	[illegible]
19	[illegible]	[illegible] 32	096587107	[illegible]
20	[illegible]	[illegible] 2 [illegible] 11 [illegible]	096543543	[illegible]
21	[illegible]	[illegible] 17 [illegible] 33	095120588	[illegible]
22	[illegible]	[illegible] 38	096999558	[illegible]
23	[illegible]	[illegible] 38	099051552	[illegible]
24	[illegible]	[illegible] 3	099[illegible]33-06	[illegible]
25	[illegible]	[illegible] 5		[illegible]
26	[illegible]	[illegible] 23	095 [illegible]81	[illegible]
27	[illegible]	[illegible] 18	094561400	[illegible]
28	[illegible]	[illegible] 10 [illegible] 5	077161037	[illegible]
29	[illegible]	[illegible]	097[illegible]38	[illegible]
30	[illegible]	[illegible] 14	091.63.48.76	[illegible]
31	[illegible]	[illegible]	094253299	[illegible]

32	[illegible]	[illegible]	093-54-70-20	[illegible]
33	[illegible]	[illegible]	096333232	[illegible]
34	[illegible]	[illegible]	096644447	[illegible]
35	[illegible]	[illegible]	094681142	[illegible]
36	[illegible]	[illegible]	093212366	[illegible]
37	[illegible]	[illegible]	093-85-11-81	[illegible]
38	[illegible]	[illegible]	095088879	[illegible]
39	[illegible]	[illegible]	098180965	[illegible]
40				

ՏԵՂԵԿԱՆՔ

Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2022-2026 թվականների զարգացման հնգամյա ծրագրի որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների մասին

Հ/հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1.	Տեղեկանքի վերնագիրը	ՏԵՂԵԿԱՆՔ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
2.	Հանրությանը իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ իրազեկումը	Հանրային քննարկամ հրավերը տեղադրվել է համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ https://kotayk-garni.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=253#.Y60zEnZByM8 Համայնքի բնակիչներին նամակների միջոցով տեղեկացվել էհանրային լսումների անցկացման մասին:
3.	Հանրային քննարկումների մասնակիցները	• Համայնքապետարանի աշխատակազմը, • Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցները, • Համայնքի բնակիչներ, • Համայնքի ավագանու անդամներ, • ՄԱԶԾ-ից Ֆլորա Միրզախանյանը:
4.	Հանրային քննարկումներին մասնակցության արդյունքները	Հիմնական առարկություններ և առաջարկություններ չեն ներկայացվել՝ Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2022-2026 թվականների զարգացման հնգամյա ծրագրի հաստատման որոշման նախագծի վերաբերյալ:
5.	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առակրության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4
Առաջարկություններ, առարկություններ չեն ներկայացվել	-	-	-